

*Հաստատված է՝  
«ՀՈՒՄԿ» ԿՀ Գիտական խորհրդի  
2017թ. մայիսի 30-ի թիվ 2 նիստում  
Գիտական խորհրդի նախագահ՝  
\_\_\_\_\_ Հ. Մ. Սահակյան*

## **Կ Ա Ր Գ**

### **ՈՒՍԱՆՈՂԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ**

#### **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ**

- 1.1 Ուսանողի անհատական աշխատանքի կարգավորումը նպատակ է հետապնդում օժանդակելու ակադեմիական լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներին:
- 1.2 Ուսանողի անհատական աշխատանքի կազմակերպման և ակադեմիական օժանդակության կարգը հաստատում և դրանում փոփոխություններն ու լրացումները կատարում է «ՀՈՒՄԿ» ԿՀ Գիտական խորհուրդը:

#### **2. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

- 2.1 Ուսանողի հետ տարվող անհատական աշխատանքը ընդգրկված է դասախոսի պարտականությունների շրջանակում, որը դրսևորվում է մի շարք ձևերով, ինչպիսիք են կուրսային աշխատանքի, ընթացիկ խորհրդատվությունների, մագիստրոսական թեզի ղեկավարման միջոցներով, որոնք արտացոլված են ուսումնական պլանում:

- 2.2 Ուսանողը 2.1 կետում նշված ուղղություններից բացի, կարող է պահանջել լրացուցիչ ակադեմիական խորհրդատվություն, որի համար նախօրոք դիմում է ուսումնական մասի ղեկավարին և 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում դասախոսի հետ անհատական պարապմունք անցկացնելու օրվա մասին:
- 2.3 Ուսանողին անհատական ակադեմիական օժանդակություն ցույց տալու նպատակով ուսումնական մասում սահմանվում է դասախոսների հերթապահության գրաֆիկ, որի մասին տեղյակ է պահվում ուսանողներին:

### **3. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

- 3.1 «ՀՈՒՄԿ» ԿՀ-ն պարբերաբար կազմակերպում է գործող հաշվապահների համար վճարովի խորհրդատվություն հարկային օրենսգրքի փոփոխությունների, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների մեկնաբանումների գծով, որից անվճար հիմունքներով կարող են օգտվել ՄՈՒՀ-ի ուսանողները:
- 3.2 Անհրաժեշտության դեպքում, ուսանողի անհատական խորհրդատվություն իրականացնելիս ՄՈՒՀ-ը կարող է դրսից հրավիրել նեղ մասնագիտացված խորհրդատուի:

### **4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ**

- 4.1 Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ուսումնական մասը կազմակերպում է ուսումնական խորհրդատուների (կուրատորների) ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:
- 4.2 Մասնագիտության ուսումնական խորհրդատուների թիվը սահմանում է ուսումնական մասը՝ ելնելով տարբեր կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների թվի և դասախոսական ներուժի համադրումից:

4.3 Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ և հսկում իրեն ամրագրված ուսանողների ուսումնական առաջընթացը ուսումնառության երկու տարվա ընթացքում:

4.4 Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ, օգնում դասընթացների ընտրության և անհատական ուսումնական ծրագրերի կազմման գործընթացներում:

## 5. ԿՈՒՐՍՂԵԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

5.1 Մագիստրատուրայի ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ուսումնական մասը կազմակերպում է կուրսղեկների ծառայություն, որում ընդգրկում են «ՀՈՒՄԿ» ԿՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ:

5.2 Կուրսղեկներին նշանակում, հաստատում և անհրաժեշտության դեպքում փոխարինում է ուսումնական մասի ղեկավարը:

5.3 Յուրաքանչյուր կուրսի կցված կուրսղեկը երկու տարիների ընթացքում ղեկավարում է համապատասխան կուրսի ուսումնական աշխատանքները, ուսանողների իրավունքների և պարտականությունների հետ կապված խնդիրները, կազմակերպչական հարցեր:

5.4 Կուրսղեկներն ուսանողներին հուզող խնդիրները կարող են ներկայացնել հաստատության ղեկավար կազմին և ստանալ համապատասխան լուծումներ: